

**ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ 2006Թ.
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**

Ներկայումս կրթության բնագավառի գերակա խնդիրն է կրթության, որպես աղքատության հաղթահարման և հանրապետության սոցիալտնտեսական զարգացման հիմնական գործոններից մեկի, որակի բարձրացումը՝ ապահովելով համակարգի արդյունավետ գործունեությունը և քաղաքացիների՝ իրենց ձգտումներին և ընդունակություններին համապատասխան կրթություն ստանալու հավասար մատչելիությունը: Այս նպատակներից ելնելով՝ հանրապետությունում իրականացվում են լայնածավալ բարեփոխումներ, որոնք ներառում են կրթության բոլոր աստիճանները:

Դրանցից առաջնայինը շարունակում է մնալ հանրակրթությունը: Հանրակրթության ոլորտում պետական քաղաքականության իրականացման և կրթության օրենսդրական դաշտի կատարելագործման նպատակով մշակվել և ՀՀ Ազգային ժողով է ներկայացվել «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի նախագիծը:

Հանրակրթության համակարգի կառավարման գործընթացը բարելավելու նպատակով մշակվել են տնօրենի ընտրության, նշանակման և ՊՈԱԿ-ի խորհրդի ընտրության կարգերը:

Համաձայն ՀՀ կառավարության կողմից 2004 թվականին հաստատված Հանրակրթության պետական կրթակարգի, 2006 թվականին սկսվեց անցումը 12-ամյա կրթության, որը հնարավորություն է տալիս Հայաստանի հանրակրթությունը համադրելի դարձնել արտասահմանյան զարգացած երկրների կրթական համակարգերի հետ, ինչպես նաև նպաստում է համակարգի նյութատեխնիկական և կադրային ռեսուրսների արդյունավետ օգտագործմանը: 12-ամյա կրթակարգի ներդրմանը զուգընթաց իրականացվում է համապատասխան ծրագրային չափորոշիչների, առարկայական ծրագրերի ու դասագրքերի մշակումը, կազմակերպվում է ուսուցիչների վերապատրաստումը՝ նոր մշակումներին համապատասխան:

Ավագ դպրոցների արդյունավետության բարձրացման և որակի էապես բարելավման նպատակով նախարարությունը սկսել է առանձին գործող ավագ դպրոցների համակարգի զարգացման հայեցակարգի մշակումը, որը կառավարություն կներկայացվի 2007 թվականին:

2006 թվականին սկսվել է հայոց լեզու, գրականություն, մաթեմատիկա և ինֆորմատիկա առարկաների չափորոշիչների և ծրագրերի ներդրման գործընթացը: Դրանց հիման վրա ստեղծվել են դասագրքեր, այդ թվում՝ մի քանիսն այլընտրանքային, փորձարկվել են մոտ 50 դպրոց-կենտրոններում: Մշակվել են բնագիտական և հասարակագիտական ուսումնական բնագավառների առարկայական չափորոշիչներն ու ծրագրերը: Հայաստանում կրթական չափորոշիչների և ծրագրերի մշակման պրակտիկայում առաջին անգամ ներդրվել են ուսումնական նյութի յուրացմանն ուղղված եռամսկարդակ (նվազագույն, միջին, առավելագույն) պահանջներ: Առարկայական

չափորոշիչների և ծրագրերի գրքույկները տպագրվել և 9800 ընդհանուր տպաքանակով բաշխվել են դպրոցներին: Ներկայումս ընթացքի մեջ է հանրակրթության ևս 4 ուսումնական բնագավառների (օտար լեզու, արվեստ, տեխնոլոգիա, ֆիզիկական և նախնական զինպատրաստություն) առարկայական չափորոշիչների և ծրագրերի մշակումը:

ՀՀ մարզերում և Երևան քաղաքում շարունակաբար իրականացվում են ուսուցիչների վերապատրաստումներ՝ ինչպես համակարգչային գրագիտության, այնպես էլ ուսումնական նոր ծրագրերի, չափորոշիչների, գնահատման նոր համակարգի, ուսուցման նոր մեթոդների ուղղությամբ: Ընդհանուր թվով, վերապատրաստվել է շուրջ 18000 ուսուցիչ:

Հանրակրթության որակի բարելավման, ինչպես նաև համակարգի առաջանցիկ զարգացման նախապայման է հանդիսանում ժամանակակից տեղեկատվական և հաղորդակցման տեխնոլոգիաների ներմուծումը հանրակրթական դպրոց և դպրոցների համալրումը ժամանակակից համակարգչային միջոցներով: 2006 թվականին 368 դպրոց համալրվել է համակարգչային սարքավորումներով: Ներկայումս հանրակրթական 535 դպրոց համալրված է մոտ 2500 համակարգիչներով և այլ համակարգչային սարքավորումներով: Մշակվել են հանրակրթական դպրոցների ինտերնետային համալիր էջի ստեղծման ու ներդրման պահանջները: 477 դպրոցներում տեղադրվել են 11 առարկաների էլեկտրոնային դասագրքեր:

Հանրակրթության ոլորտում իրականացվող բարեփոխումների ներդրման հիմնական դերակատարներն ուսուցիչներն են: Նախարարությունը, հավատարիմ մնալով որդեգրված ռազմավարությանը, շարունակել է ուսուցիչների սոցիալական դիրքի բարելավման և դպրոցները որակյալ մանկավարժական կադրերով ապահովման քաղաքականությունը:

Բարձրացվել է մանկավարժների և վարչական անձնակազմի միջին ամսական աշխատավարձը 16.1 %-ով և կազմել համապատասխանաբար՝ 58.3 հազ. և 60.1 հազ. դրամ: Իսկ ուսումնաօժանդակ և տնտեսական անձնակազմի միջին ամսական աշխատավարձը 9.8%-ով և կազմել է 21.2 հազ. դրամ:

Մինևույն ժամանակ միջոցառումներ են ձեռնարկվել մանկավարժների խրախուսման ուղղությամբ. կազմակերպվել և անց են կացվել ամենամյա՝ «Տարվա լավագույն ուսուցիչ», «Տարվա լավագույն տնօրեն», «Տարվա լավագույն դաստիարակ» մրցույթները: Հանրապետության շուրջ 40 ուսուցիչներ և 16 տնօրեններ պարգևատրվել են ՀՀ վարչապետի և ՀՀ ԿԳ նախարարության կողմից: Հայ առաքելական եկեղեցու համագործակցությամբ կազմակերպվել և անցկացվել է «Առարկայական լավագույն ուսուցիչ» մրցույթը, որին մասնակից 43 ուսուցիչներ արժանացել են դրամական պարգևի:

Շարունակվել են սահմանամերձ, լեռնային և բարձր լեռնային բնակավայրերը մանկավարժական կադրերով համալրման և մանկավարժների նպատակային պատրաստման ծրագրերը: 2003 թվականից մինչ այժմ սահմանամերձ լեռնային և բարձր լեռնային բնակավայրերի հանրակրթական դպրոցներ գործուղվել են շուրջ 250 մանկավարժական կադրեր, որից 77-ը՝ միայն 2006 թվականին:

Մանկավարժական մասնագիտություններին հատկացված անվճար տեղերի մինչև 50%-ի չափով կազմակերպվել է մանկավարժական կադրերի նպատակային

ընդունելություն, ինչպես նաև ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական ինստիտուտի մարզչական ֆակուլտետում (30%) և Հայաստանի ագրարային համալսարանում (50%): Մանկավարժական մասնագիտություններին հատկացված նպատակային տեղերի մինչև 50%-ի չափով նպատակային ընդունելություն է կազմակերպվել նաև բուհերի հեռակա բաժիններում:

Դպրոցների շենքային պայմանների բարելավման և նյութատեխնիկական բազայի արդիականացման նպատակով 2006թ. ընթացքում հանրակրթության ոլորտում իրականացվել են մեծ ծավալի շինվերանորոգման աշխատանքներ:

Շարունակվել են նաև ԱՄՆ «Հայ կրթական հիմնարկության» կողմից իրականացվող դպրոցների վերանորոգման ծրագրերը, մասնավորապես վերանորոգվել է Հայաստանում՝ 9 և ԼՂՀ-ում՝ 6 դպրոց:

Հանրակրթության ոլորտի բարեփոխումների կարևոր խնդիր է կրթության որակի գնահատման և վերահսկման նոր համակարգի ներդրումը: Երևան քաղաքի և Արագածոտն մարզի մի շարք դպրոցներում անցկացվել է «Ֆիզիկա», «Քիմիա», «Աշխարհագրություն», «Կենսաբանություն» առարկաների ավարտական և միասնական քննական առաջադրանքների բովանդակային փորձարկում, յուրաքանչյուր առարկայից 300 աշակերտների մասնակցությամբ: Իրականացվել է նաև «Հայոց լեզու, գրականություն» և «Քիմիա» առարկաների ավարտական և միասնական քննության փորձարկում՝ Երևան քաղաքի Էրեբունի, Նուբարաշեն, Շենգավիթ համայնքների և Արարատի մարզի 163 դպրոցների շուրջ 7500 աշակերտների մասնակցությամբ: 2007 թվականից կսկսվի նոր քննակարգի ներդրումը:

Կարևորելով հանրակրթության ոլորտում իրականացվող բարեփոխումները, կրթության որակի բարելավմանը միտված գործընթացների դերն ու նշանակությունը՝ հանրակրթական ծրագրերի լիցենզավորման ընթացքում առանձնահատուկ ուշադրություն է դարձվել հաստատությունների ուսումնամեթոդական ապահովմանը, միջնակարգ կրթության պետական չափորոշիչ պահանջների բավարարմանը, նյութատեխնիկական հագեցվածությանը, մանկավարժական կազմին և այլն: 2006 թվականին լիցենզավորվել են մայրաքաղաքի թվով 165 պետական հանրակրթական դպրոցներ:

Կրթության ոլորտում միասնական քաղաքականության իրականացման, պետական չափորոշիչների կիրառման վերահսկողության և մշտադիտարկման ապահովմանը նպաստելու, կրթության որակի բարձրացմանն աջակցելու և կրթության բնագավառը կարգավորող օրենսդրության պահանջների նկատմամբ պետական և հասարակական վերահսկողություն ապահովելու նպատակով մշակվել են «Հայաստանի Հանրապետությունում հանրակրթության, նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության տեսչավորման» և «Հրապարակային հաշվետվությունների մշակման և ներկայացման» կարգերի նախագծերը: ՀՀ կրթության պետական տեսչությանը հասցեագրվել են շուրջ 350 դիմում-բողոքներ, որոնց 60%-ը ստացել է դրական լուծում: Տեսչավորվել է 2 պետական և 2 ոչ պետական ուսումնական հաստատություն:

2006 թվականին հանրապետության դպրոցներում դասավանդվող դրույքների ընդհանուր թիվը կազմել է 33671.5՝ 2005թ. 34382.9 դրույքի դիմաց: Դրույքների քանակը նվազել է դասարանների միջին խտության ավելացման հաշվին, որը պայմանավորված է նաև 2006թ. 12-ամյա ուսուցմամբ դպրոց հաճախող 1

դասարանցիների թվով:

Հանրակրթության համակարգի արդյունավետության ապահովման տեսանկյունից. 2006թ. հանրակրթական դպրոցներում «աշակերտ/ուսուցիչ» հարաբերակցությունը կազմել է 13.8` 2005թ. 13.89-ի համեմատ, «աշակերտ/ոչ ուսուցիչ» հարաբերակցությունը կազմել է 22.73` 2005թ. 21.63-ի համեմատ, իսկ դասարանների միջին խտությունը 22.23` 2005թ. 22.32-ի դիմաց: Ուսուցիչների միջին ծանրաբեռնվածությունը կազմել է 22.0:

Կրթության մատչելիության և հավասար հնարավորությունների ապահովման տեսանկյունից կարևորվել են կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթության մեջ ներգրավման և որակի բարելավման խնդիրները: Դանիական «Առաքելություն Արևելք» բարեգործական կազմակերպության աջակցությամբ մշակվել, փորձարկվել և հաստատվել են կրթության առանձնահատուկ պայմանների կարիք` մտավոր հետամնացություն ունեցող երեխաների հատուկ կրթության և առարկայական չափորոշիչները, «Անհատական ուսումնական պլանի» օրինակելի ձևը: ՀՀ կառավարության կողմից հաստատվել է կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց տնային ուսուցման իրավունք վերապահող հիվանդությունների ցանկը: Ներկայումս ներառական կրթություն են իրականացնում Երևան քաղաքի 6 հանրակրթական դպրոցներ:

Նախարարության կարևոր խնդիրներից է եղել նաև աշակերտների արտադպրոցական և ռազմամարզական դաստիարակությունը:

Մշակվել և ՀՀ կառավարության կողմից հաստատվել է «Հանրակրթական դպրոցներում և մասնագիտական ուսումնական հաստատություններում նախազորակոչային ու զորակոչային տարիքի պատանիների զինծառայությանը ֆիզիկապես նախապատրաստելու և դրա նկատմամբ վերահսկողություն իրականացնելու կարգը»:

Հանրակրթության որակի ապահովման տեսանկյունից շատ կարևոր է դառնում նախադպրոցական կրթությունը: Ներկայումս այս համակարգում երեխաների ընդգրկվածության ցուցանիշը ցածր է 20%-ից: Նախարարության ռազմավարությունը նախադպրոցական կրթության ոլորտում ուղղված է համակարգի արդիականացմանը և զարգացման նախադրյալների ստեղծմանը: Մասնավորապես, գործունեության առաջնային ուղղություններն են եղել օրենսդրական դաշտի և կառավարման համակարգի կատարելագործումը, կադրերի մասնագիտական կարողությունների զարգացումը, նյութատեխնիկական և ուսումնանյութական հիմքի բարելավումը, ծառայությունների մատչելիության և ընդգրկվածության մեծացումը: Ոլորտի հետագա զարգացման նպատակով մշակվել է վաղ մանկության զարգացման և նախադպրոցական կրթության բարեփոխումների ռազմավարություն ու դրա փորձարկման ծրագիր :

Մասնագիտական կրթության ոլորտի հիմնախնդիրն է շուկայական տնտեսության պայմաններում մրցունակ մասնագետների պատրաստումը: Ներկայումս միջին մասնագիտական 81 պետական և շուրջ 25 ոչ պետական ուսումնական հաստատություններում ներկայումս սովորում է շուրջ 28500 ուսանող և դասավանդում` շուրջ 4500 դասախոս:

Հանրապետությունում գործում են 17 պետական, ինչպես նաև պետության մասնակցությամբ երեք բուհեր: Ոչ պետական բուհերի թիվը 72 է, որից 28-ը

հավատարմագրված են, իսկ 8-ն ունեն հավատարմագրված մասնագիտություններ: Հայաստանում ներկայումս մասնագետներ են պատրաստվում շուրջ 200 մասնագիտությունների գծով՝ ընդ որում պետական բուհերում սովորում է 72630 ուսանող, որից 15143-ը հեռակա համակարգում, ոչ պետական բուհերում՝ 25214 ուսանող: ՀՀ պետական բուհերում դասավանդում են 6613 դասախոսներ, այդ թվում՝ գիտության դոկտորներ՝ 592, գիտության թեկնածուներ՝ 2606, պրոֆեսորներ՝ 729, դոցենտներ՝ 1934 :

Նախնական և միջին մասնագիտական կրթության ոլորտում նախարարության քաղաքականությունն ուղղված է աշխատաշուկայի պահանջներին միտված մասնագիտական կրթության և կրթական ծառայությունների մատուցման բարձր որակի ապահովմանը:

2006-2008 թվականներին նախնական և միջին մասնագիտական կրթության ոլորտի գերակա խնդիրն են հանդիսանում.

- մասնագիտական կրթության և ուսուցման՝ կարողությունների վրա հիմնված չափորոշիչների ներդրում,
- որակի վերահսկման մեխանիզմների արդիականացում,
- տեխնիկական աջակցության և որակի երաշխավորման ենթակառուցվածքի ստեղծում,
- ծախսերի արդյունավետություն և կրթական արդյունքների (ելքերի) բարելավում,
- կրթության ֆինանսավորման օպտիմալացում,
- կրթության արդիականացման իրականացման ու մոնիտորինգի ազգային հնարավորությունների ստեղծում,
- ուսումնական հաստատություններում ներդրված մասնագիտությունների ցանկի համապատասխանեցում տվյալ տարածաշրջանի սոցիալ-տնտեսական զարգացումների պահանջներին:

Մշակվել և հաստատվել է միջին մասնագիտական կրթության պետական կրթական 7 չափորոշիչ: Թիրախային 4 քոլեջներում ներդրվել է մոդուլային ուսուցում 4 մասնագիտության գծով: Մշակվել և հաստատվել են նախնական և միջին մասնագիտական կրթության մասնագիտությունների ցանկերն՝ ըստ տևողության, որակավորումների, ուսուցման հիմքերի, ինչպես նաև հատուկ կրթական պայմաններ պահանջող անձանց համար նախատեսվող նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության մասնագիտությունների ցանկը: 2006 թվականին հիմնադրվել է Ալավերդու արհեստագործական ուսումնարանը: Միջազգային ծրագրերի միջոցով վերապատրաստվել են շուրջ 450 տնօրեն, դասախոս և արտադրական ուսուցման վարպետ, տրամադրվել է անհրաժեշտ արհեստանոցային գույք Վանաձորի պետական տեխնոլոգիական, Իջևանի պետական, Երևանի գյուղատնտեսագիտական, Երևանի հումանիտար-տեխնիկական քոլեջներին, ինչպես նաև շուրջ 80 համակարգիչ և էլեկտրոնային այլ սարքավորումներ Տավուշի և Լոռու մարզերի, ինչպես նաև Երևան քաղաքի 13 քոլեջների:

Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության հիմնախնդիրը Բոլոնիայի գործընթացի սկզբունքների իրագործումն է, որը կապահովի հանրապետության բարձրագույն կրթության ինտեգրումը Եվրոպական միասնական կրթական համակարգին: Բարձրագույն մասնագիտական կրթության ոլորտում ձեռնարկված բարեփոխումները ներառում են կրթության կառուցվածքը, բովանդակությունը և կառավարումը: Այդ բարեփոխումների արդյունքում

հանրապետության բուհերում ներդրվել է կրթության երկաստիճան համակարգ՝ բակալավրի և մագիստրոսի ծրագրերով: Հանրապետության 6 բուհերում կիրառվել է կրթափորձ՝ կրեդիտային համակարգին անցնելու կապակցությամբ: Կրթափորձի արդյունքները ամփոփվել և հրատարակվելու են առանձին գրքույկով՝ բուհերին տալով երաշխավորություններ կրեդիտային համակարգին՝ ըստ կրթական աստիճանների համակարգի անցման վերաբերյալ:

Բոլոնիայի սկզբունքների իրագործման ուղղությամբ պատրաստվել է «ՀՀ բարձրագույն մասնագիտական կրթության ոլորտում Բոլոնիայի գործընթացի սկզբունքների իրագործման (2006-2010թթ)» ժամանակացույցը, իրականացվել է մի շարք օտարերկրյա որակավորումների ճանաչում ՀՀ-ում և տեղեկատվություն է տրամադրել օտարերկրյա գործընկերներին ՀՀ-ում ձեռքբերված որակավորումների վերաբերյալ՝ նպաստելով շարժունությանը, ինչպես նաև մշակվել է Դիպլոմի միասնական հավելվածի ազգային տարբերակը:

Համաձայն «ՀՀ բարձրագույն մասնագիտական կրթության ոլորտում Բոլոնիայի գործընթացի սկզբունքների իրագործման (2006-2010թթ)» ժամանակացույցի՝ նախատեսվում է մի շարք միջոցառումների իրականացում, մասնավորապես՝

- որակավորումների ազգային համակարգի (ՈԱՀ) ներդրում,
- եռաստիճան համակարգի ներդրում,
- ավարտական փաստաթղթի միասնական հավելվածի մշակում և ներդրում,
- կրեդիտային համակարգի ներդրում և համապատասխան պետական կրթական չափորոշիչների մշակում,
- ավարտական փաստաթղթերի փոխճանաչման և համարժեքության ապահովում,
- ըստ կրթական աստիճանների կրթության որակի ապահովման համակարգի ձևավորում և ներդրում, որը կապահովի համադրելիությունը եվրոպական բարձրագույն կրթական տարածքին,

Բարձրագույն մասնագիտական կրթության ոլորտի կարևոր խնդիրներ են նաև աշխատաշուկայի պահանջներին համապատասխան որակապես նոր կադրերի պատրաստումը, բուհերում ներդրվող խոշորացված մասնագիտությունների ցանկի մշակումը, ինչպես նաև բուհերի կառավարման և ֆինանսավորման ինքնավարության ընդլայնման ապահովումը:

Աշխատանքներ են տարվել հանրապետությունում կրթական գործունեության լիցենզավորման, բարձրագույն մասնագիտական ուսումնական հաստատությունների և առանձին մասնագիտությունների պետական հավատարմագրման, այդ բնագավառում տեղ գտած խախտումների ու թերությունների վերացման ուղղությամբ: Մասնագիտական կրթության ոլորտում լիցենզավորման և պետական հավատարմագրման ուղղությամբ բարեփոխումների շրջանակներում առավել կարևոր խնդիրն է մասնագիտական կրթական ծրագրերի լիցենզիայի պայմանների հստակեցումը:

Հայաստանի կրթության համակարգի ինտեգրմանը և զարգացմանը էապես նպաստում են սովորողների և դասախոսների փոխանակման ծրագրերը:

2006թ. միջպետական համաձայնագրերի շրջանակներում նախարարության կողմից արտերկրներ բուհական և հետբուհական կրթություն ստանալու նպատակով գործուղվել են 155 ՀՀ քաղաքացիներ: 400 օտարերկրյա քաղաքացիների փաստաթղթեր ուսումնասիրվել և ուղարկվել են ՀՀ բուհեր՝ նրանց

ընդունելությունը կազմակերպելու նպատակով: Ներկայումս շուրջ 2400 օտարերկրյա քաղաքացիներ ուսանում են ՀՀ բուհերում:

Գիտության ոլորտում նախարարության քաղաքականությունն ուղղված է գիտության ֆինանսավորման ծավալների ավելացմանը, ֆինանսավորման արդյունավետության և գիտական կազմակերպությունների գործունեության արդյունավետության բարձրացմանը, գիտական ներուժի վերարտադրության ապահովմանը, գիտության և տեխնոլոգիաների գերակա ուղղությունների հստակեցմանը: 2006 թվականին պետական բյուջեից ֆինանսավորվել է 923 գիտական ծրագրեր և թեմաներ՝ 4735941.6 մլն դրամ ծավալով, մասնավորապես. - գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորում՝ 161 ծրագիր, 2721045.2 մլն դրամ, - գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորում 757 թեմա, 1281568.1 մլն դրամ, - գիտական և գիտատեխնիկական պետական ծրագրերի նպատակային ծրագրային ֆինանսավորում 5 ծրագիր, 733328.3 մլն դրամ:

Գիտության համակարգի զարգացումն ապահովելու նպատակով մշակվել է Հայաստանի Հանրապետությունում գիտության ոլորտի բարեփոխումների հայեցակարգը և համապատասխան միջոցառումների իրականացման ժամանակացույցը:

Գիտական աստիճանի վկայագիր տրվել է 488 (այդ թվում՝ 36-ը գիտության դոկտորի) գիտնականի, իսկ օտարերկրյա պետություններում ստացած գիտական աստիճանի համապատասխանեցման հավաստագիր՝ 17 գիտնականի (այդ թվում 4 դոկտորի): Գիտական կոչման վկայագիր տրվել է 321 (այդ թվում՝ 76-ը պրոֆեսորի և 245 դոցենտի) գիտնականի:

Նախարարության գործունեության հիմնական ուղղություններից է միջազգային գիտակրթական և տեխնիկական համագործակցության զարգացումը: 2006 թվականին ստորագրվել են մի շարք փոխըմբռնման հուշագրեր, համաձայնագրեր, կրթության և գիտության բնագավառում համագործակցության ծրագրեր:

Նախարարությունն ակտիվորեն համագործակցում է մի շարք միջազգային կազմակերպությունների հետ, մասնավորապես՝ ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամ, «Առաքելություն Արևելք» դանիական բարեգործական կազմակերպություն, «Վորլդ Վիժն» միջազգային բարեգործական կազմակերպություն և այլն:

Կրթության բնագավառը մեծ կարևորություն ունի հայապահպանության խնդրում: Էջմիածինի Գևորգյան ձեմարանում իրականացվել է սփյուռքահայ ուսուցիչների վերապատրաստման 7-րդ դասընթացը, որին մասնակցել է 13 երկրի 70 ուսուցիչ: Կայացել է նաև Համահայկական կրթական երկրորդ խորհրդաժողովը, որին մասնակցել են հանրապետության, ԼՂՀ և արտասահմանյան 20 երկրների հայ կրթական հաստատությունների և կազմակերպությունների շուրջ 150 ներկայացուցիչներ: 2006 թվականին ընդունվել են ՀՀ-ում մասնագիտական կրթություն ստանալ ցանկացող 470 դիմորդների փաստաթղթեր և 11 սփյուռքահայ ասպիրանտ դիմորդների փաստաթղթեր: Ներկայումս հանրապետության մասնագիտական ուսումնական հաստատություններում սովորում են ավելի քան 3200 սփյուռքահայ երիտասարդներ:

Շարունակվել է արտերկրի հայկական կրթօջախներին դասագրքեր և ուսումնական

նյութեր տրամադրելու գործընթացը:

Վերջին տարիներին կրթությանն ուղղվող պետական ծախսերի դինամիկայում արձանագրվել են դրական տեղաշարժեր: Այսպես՝ 2006 թվականի կրթության ոլորտին պետական բյուջեով նախատեսված ծախսերը կազմել են ՀՆԱ-ի 3.23%, 2005 թվականի 2.53%-ի դիմաց: 2006 թվականին պետական բյուջեից կրթության և գիտության բնագավառներին հատկացվել է 82283.2 մլն դրամ, որը կազմում է պետական ծախսերի 17.0%-ը:

Նախարարությունը կարևորել է գործունեության թափանցիկության, տեղեկատվության մատչելիության ապահովումը և քաղաքացիական հասարակության մասնակցությունը: 2006 թվականին նախարարությունում գործել է «Թեժ գիծ» հեռախոսակապը, որի միջոցով քաղաքացիներին հուզող հարցերին տրվել են պարզաբանումներ: Բարձրացված հարցերը խմբավորվել և հրապարակվել են «Կրթություն» շաբաթաթերթում: Պարբերաբար կազմակերպվել են մամուլի ասուլիսներ ինչպես նախարարության տարբեր ստորաբաժանումների գործունեության, այնպես էլ ոլորտում իրականացվող գործընթացների և առկա հիմնախնդիրների վերաբերյալ: Հանրության լայն շերտերին հետաքրքրող տեղեկությունները տարածվել են մամուլի հաղորդագրությունների և ՋԼՄ-ներում առկա թեմատիկ հաղորդաշարերի միջոցով, հրատարակվել են տեղեկատվական թերթիկներ, պաստառներ և բուկլետներ:

2007 թվականի համար սահմանվել են հետևյալ գերակա խնդիրները և դրանց իրականացման միջոցառումները՝

Հանրակրթության ոլորտի բարեփոխումներ

- 12-ամյա կրթության ուսումնական պլանի, առարկայական նոր ծրագրերի և չափորոշիչների մշակում, մեթոդական նյութերի պատրաստում և տպագրում,
- ուսուցիչների վերապատրաստում՝ համաձայն նոր ծրագրերի,
- ավարտական քննությունների նոր կարգի աստիճանական ներդրում,
- հանրակրթական հաստատություններում ուսուցման նոր տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման ընդլայնում :

Բարձրագույն կրթության բարեփոխումները՝ ըստ Բոլոնիայի գործընթացի հիմնական ուղղությունների

- կրեդիտային համակարգի ներդրում,
- բարձրագույն մասնագիտական կրթության կրեդիտային համակարգին համապատասխան պետական կրթական չափորոշիչների մշակում,
- համընթեռնելի և համատեղելի բարձրագույն կրթության փաստաթղթերի ներդրում,
- որակավորումների ազգային համակարգի ստեղծում: